ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 դեկտեմբերի 2016 թվականի N 288-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 314-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշման N 1 հավելվածի 91-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց>>, <Ջրվեժի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացված ներքին աուդիտի արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Լ. Նահապետյանին.*

1) <<Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված *510360 (հինգ հարյուր տաս հազար երեք հարյուր վաթսուն)* ՀՀ դրամը:

2) <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2016 թվականին կոմպլեկտավորման տեղեկանքով ավել աշակերտ ներկայացնելու հետևանքով ֆինանսավորված *478615 (չորս հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր տասնհինգ)* ՀՀ դրամը, որից տարրական կրթություն՝ *200260 (երկու հարյուր հազար երկու հարյուր վաթսուն)* ՀՀ դրամ, հիմնական կրթություն՝ *278355 (երկու հարյուր յոթանասունութ հազար երեք հարյուր հիսունհինգ)* ՀՀ դրամ:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար *Լ. Պետրոսյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Գ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի դեկտեմբերի 06
ք. Հրազդան